

## ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

### ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՔԱՅԼ՝ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ՆԱԿԱԳՐՈՒՄԻ



**Բրյուսելում ավարտվեցին Վրաստանի եւ Եվրամիության միջև ազատ, համընդգրկուն առևտրի մասին բանակցությունները:**

տարածքը կապահովի Վրաստանի եւ Եվրամիության տնտեսական ինտեգրումը, քաղաքական ավելի սերտ կապերի հաստատումը:

Ազատ առևտրի տարածքը, որի շուրջ բանակցությունները տարվում էին շուրջ 17 ամիս, անցկացվեցին յոթ փուլով, Վրաստանին ընծայում է եվրոպական շուկա դուրս

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՐԱՅԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

### ԱՎԱՐՏՎԵՅԻՆ ԽՈՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՉԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԲԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հայաստանն ու Եվրամիությունը հաջողությամբ ավարտեցին բանակցությունները խոր եւ համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրի (ԽՀԱԱՀ) շուրջ՝ որպես կառույցի ու Հայաստանի միջև Ասոցիացման համաձայնագրի մաս:**



Բանակցությունների յոթերորդ եւ եզրափակիչ փուլում կողմերը համաձայնության են եկել համաձայնագրի հիմնական դրույթների շուրջ, որով նոր շրջանակ է նշանակվել ԵՄ-Հայաստան առևտրային հարաբերություններում:

ԽՀԱԱՀ-ը փոխառնակվելու պայմաններ է ստեղծում թե՛ ԵՄ, թե՛ Հայաստանի համար: Մասնավորապես, այն կնպաստի Հայաստանի տնտեսական ինտեգրմանը Եվրամիությանը՝ ապահովելով հայրենական ապրանքների ավելի դյուրին մուտք դեպի Եվրոպական շուկա, ինչպես նաև փոխաջակցություն երկու շուկաների միջև: Այն հնարավորություններ կընձեռնի Հայաստանին արդիականացնել իր առևտրային հարաբերությունները եւ առևտրի տարբեր ոլորտներում օրենքի ու կանոնակարգերի ներդաշնակության հեռանկարներ կբացի տնտեսական զարգացման համար: Այդ բարեփոխումները պայմաններ կստեղծեն, որպեսզի հայաստանյան տնտեսության հիմնական ճյուղերը համապատասխան դառնան ԵՄ չափանիշներին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ - ԼԵՀԱՍՏԱՆ

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

**Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Լեհաստանում: Այցի շրջանակներում, նա հանդիպում ունեցավ իր լեհ գործընկերոջ՝ Դոնալդ Տուսկի հետ:**



կամքը: Մենք այսուհետ եւս ցանկանում ենք զարգանալ այդ ուղիով: Դա մեր պատմական ընտրությունն է», - հավելեց նա:

Խոսելով ՆԱՏՕ-ի հետ մերժեցման մասին Իվանիշվիլին արծարծել է ռուս-վրացական հարաբերությունները: «Մեր խնդիրն է ընդհանուր հայտարար գտնել Ռուսաստանի հետ հարաբերություններում, որպեսզի վերադառնանք մեր տնտեսական կապերը, որոնք գործնականում լիովին վերացել էին», - ասել է նա:

Բիծինա Իվանիշվիլին Վարշավայում հանդիպումներ ունեցավ նաև Լեհաստանի սեյմի նախագահի եւ սենատի մարշալ Բոգդան Բորուսեյի հետ:

Ելույթ ունենալով Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկի հետ կայացած համատեղ մամուլի ասուլիսում Բիծինա Իվանիշվիլին հայտարարեց, որ Վրաստանը կշարունակի եվրատանտյան ինտեգրման ուղին եւ հնարավոր ամեն ինչ կանի Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի լիարժեք անդամ դառնալու համար: Նա շնորհակալություն հայտնեց Լեհաստանին «Եվրատանտյան ինտեգրման շրջանակներում երկրի ջանքերին աջակցելու» համար:

«Դա մեր կառավարության ռազմավարությունն է եւ վրաց ժողովրդի

## ԳՈՐԾԱԴԻՐ

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՅԻԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

**Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին կարգադրություն է ստորագրել բաց կառավարման գործընկերության (OGP) գործողության ծրագրով անհրաժեշտ միջոցառումների անցկացման մասին:**

OGP-ն ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի նախաձեռնությունն է, որը նախատեսում է նոր տեխնոլոգիաների օգտագործմանը բացառությամբ, թափանցիկության եւ քաղաքացիների ներգրավման նոր չափորոշիչների ներդրում: 2011 թվականին Վրաստանը միացավ Օբամայի նախաձեռնությանը՝ ստանձնելով համապատասխան

պարտավորություններ: Գործընթացի մոնիտորինգը իրականացնում ոչ կառավարական կազմակերպությունների ֆորումը, որը դեռևս փետրվարի 5-ին Վրաստանի վարչապետին էր ներկայացրել գործողությունների ծրագրի հետ կապված հանձնարարականները:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

### ԷՂՈՒՐԴ ԱՂԱՍԱՐՅԱՆԸ՝ ՄԻԱԼՔԱՆՔԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ



Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոն հուլիսի 19-ի իր նիստում, ցուցակային կազմի 31 պատգամավորից 26-ի պաշտպանությամբ, Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության նախագահի պաշտոնում հաստատեց մրցութային հանձնաժողովի կողմից 27 թեկնածուներից հավանության արժանացած հավակնորդ Էղուրդ Աղասարյանի թեկնածությունը:

Էղուրդ Աղասարյանը 37 տարեկան է: Ծնվել է մեծացել է Ախալքալաքում: Սովորել է ավարտել է տեղի ռուսական դպրոցը, ապա՝ Երեւանի տնտեսա-իրավաբանական համալսարանի դատա-քննչական իրավունքի ֆակուլտետը: Զինծառայությունից հետո, որպես գլխավոր մասնագետ, աշխատել է Ախալքալաքի շրջանային վարչությունում, ապա եղել է Ախալքալաքի գյուղական սպասարկման մեներջերը, վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետնախարարի ներկայացուցիչը Սամցխե-Ջավախեթիում:

Տիրապետում է հայերենին, վրացերենին, ռուսերենին եւ անգլերենին: Անուսանացած է, ունի երկու երեխա:

Հիշեցնենք, որ Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության նախկին նախագահ Նաիրի Իրիցյանը պաշտոնաթողության դիմում էր ներկայացրել հունիսի 24-ին: Գործող օրենսդրության համաձայն, վարչության նախագահի հրաժարականից հետո, կազմվեց մրցութային հանձնաժողով, որը թափուր պաշտոնի զբաղեցման համար հայտարարեց մրցույթ:

## ՆՇԱՆԱԿՈՒՄ



### ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՆՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Վրաստանի կառավարությունում առաջին փոխվարչապետի պաշտոնը զբաղեցնելու է Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին: Հունիսի 26-ին կայացած

կառավարության նիստում նրան ներկայացրեց վարչապետ Բիծինա Իվանիշվիլին: Գիորգի Կվիրիկաշվիլին այդ պաշտոնում փոխարինում է Գիորգի Մարգվելաշվիլուն, որը Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի ու առաջին փոխվարչապետի պաշտոնից պաշտոնաթող եղավ, երբ առաջիկա նախագահական ընտրությունների համար «Վրացական երազանք» կուսիցիայի կողմից առաջադրվեց նախագահության թեկնածու:

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

### ՆՈՂԱՐ ԽԱՂՈՒԻ. «ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԼԱՎԱՏԵՍՈՐԵՆ ԵՄ ԳՆԱՀԱՏՈՒՄ»

**Էներգետիկական նախագծեր, գյուղատնտեսություն, սննդամթերքների վերամշակման արտադրություն, զբոսաշրջություն եւ տրանսպորտային փոխադրումներ՝ ահա այն ոլորտները, որոնցով հետաքրքրվում են տեղական եւ օտարերկրյա ներդրողները: Այդ մասին «Վրաստանի» թղթակցի հետ զրուցելիս՝ հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նողար Խաղուրի: Նախարարի հավաստմամբ, ընթացիկ տարվա առաջին եռամսյակում երկրում իրականացվել է 240 միլիոն դոլարի ներդրում, իսկ ինչ վերաբերում է երկրորդ եռամսյակի տվյալներին, ապա Նողար Խաղուրու խոսքերով, դրանք կիրառարակվեն սեպտեմբերին: Խաղուրին վստահեցրեց, որ սեպտեմբերին տեղի կունենա նաև ներդրումային հիմնադրամի շնորհանդեսը, ինչն էլ ավելի կնպաստի գործարարության ակտիվացմանն ու տարբեր տեսակի ներդրումների գրավմանը:**

- Բառոն Նողար, ասացե՛ք խնդրեմ, վերջին մի քանի ամիսներին կոնկրետ ի՞նչ քայլեր են իրականացվել ներդրումների գրավման եւ

ընդհանրապես, երկրում գործարար սեկտորի ու Վրաստանի քաղաքացիների բարեկեցության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

- Նախ, մենք անմիջականորեն քայլեր ձեռնարկեցինք բյուջեի առավելագույն թափանցիկության ապահովման համար:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՔԱՅԼ՝ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԾԱՆԱԴԱՐՅԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մանը եւ Եվրոպականի հետ համատեղ արտադրանքի թողարկմանը: Դա կնպաստի նաեւ Եվրոպական շուկա վրացական մթերքների արտահանմանը, կբարձրացնի վրաց սպառողների անվտանգության մակարդակը:

Ենթադրվում է, որ համաձայնագրի ստորագրումից հետո, նպաստավոր պայմաններ կստեղծվեն Եվրոպական ներդրումային հոսքի ավելացման համար:

Հիշեցնենք, որ ազատ առեւտրի մասին համաձայնագիրը, որը հանդիսանում է ասոցիացիան պայմանագրի բաղկացուցիչ մասը, կստորագրվի նրանից հետո, երբ Վրաստանում եւ Եվրամիությունում կավարտվեն դրա վավերացման հետ կապված ներքին արարողությունները:

Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ազատ ու համընդգրկուն առեւտրի մասին բանակցությունների ավարտման կապակցությամբ Եվրամիության հարեւանության արտաքին հարցերով եւ անվտանգության

քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը եւ հարեւանության ընդլայնման ու քաղաքականության հարցերի Եվրոպական կոմիսար Շտեֆան Ֆյուլեն տարածել են համատեղ հայտարարություն, որտեղ ողջունում են Վրաստանի հետ ձեռք բերված պայմանավորվածությունը: Նրանք լիահույս են, որ ասոցիացիան մասին համաձայնագիրը կներկայացվի Արեւելյան գործընկերության հերթական գագաթաժողովին, որը կանցկացվի Վիլնյուսում, ընթացիկ տարվա նոյեմբերի 20-ին:

ԿԱՂԵՐ



Իսկ մինչ այդ, Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլու հրամանագրով, Վրաստանի կրթության եւ գիտության փոխ-

Քեթրին ՆԱՏՐԻԱՇՎԻԼԻՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլու հրամանագրով, Քեթրին Նատրիշվիլին նշանակվել է Վրաստանի կրթության եւ գիտության առաջին փոխնախարար: Այդ մասին տեղեկացրել են Վրաստանի վարչապետի գրասենյակից:

Նարարաներ Դավիթ Ջուրաբիշվիլին, Քեթրին Նատրիշվիլին եւ Ալուդա Գոգիչիձենն ազատվել էին զբաղեցված պաշտոններից:

Հատկանշական է, որ նախարարների կաբինետի ղեկավարին դա պարտադրում է «Իրավասությունների եւ կառավարության կառուցվածքա-

լին կարգի մասին» օրենքը, ըստ որի, նախարարի իրավասությունների դադարեցման դեպքում, անմիջապես դադարեցվում են նաեւ փոխնախարարների իրավասությունները: Վերոնշյալ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, երկրի նախագահի հետ համաձայնեցնելուց հետո, փոխնախարարի թեկնածուներին ներկայացնում է նախարարը, եւ այն հաստատում է կառավարության ղեկավարը:

Հիշեցնենք, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի պաշտոնում Գիորգի Մարգվելաշվիլուն փոխարինել էր նրա առաջին տեղակալ Թամար Սանիկիձեն:

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՋՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԸ ԿԱՆՅԵՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրային դպրոցների տնօրենները պետք է համձայն հավաստագրման քննություններ: Այդ մասին հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն:

Նրա խոսքերով, թեստավորմանը եւ հարցազրույցներով քննությունների նպատակը, դպրոցների տնօրենների պաշտոնում բարձր որակավորված կադրերի ընտրությունն է: Քննություն հանձնել ցանկացողների գրանցումը սկսվել է հուլիսի 25-ին եւ կավարտվի օգոստոսի 7-ին: Գրանցումը կանց-

կացվի նախարարության կայքում: Քննական կենտրոններ կբացվեն բոլոր տարածաշրջաններում: Թեստավորումն անցկացվելու է էլեկտրոնային տարբերակով: Քննությունները կանցկացվեն օգոստոսի 21-22-ին: Քննությունը կհամարվի հանձնած, եթե թեկնածուն հավաքի առավելա-

գույն միավորների 6 տոկոսը: Դրանից հետո, նա կանցնի հարցազրույց: Նրանք, ովքեր կհաղթահարեն երկու փուլերը հաջողությամբ, կստանան համապատասխան հավաստագրեր, ինչը թույլ կտա մասնակցելու դպրոցի տնօրենի ընտրության մրցույթին: Իսկ ովքեր 2012 թվականին թեստավորումը հաջողությամբ են հանձնել, կարող են անմիջականորեն մասնակցել հարցազրույցին:

ՆԱԽԱԳԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՈՒՄ

ՏԱՍԸ ՏՈԿՈՍԱՆՈՑ ԱՐԳԵԼԱԳԻԾԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՍՏԱՆԱ ՄԵՎ ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

Նախագահական ընտրություններին 10 եւ ավելի տոկոս ստացած ընտրական սուբյեկտը բյուջեից կստանա մեկ միլիոն լարի:

Դեռեւս խորհրդարանական ընտրություններից առաջ, Ազգային շարժման եւ մի շարք ընդդիմադիր կուսակցությունների միջեւ ձեռք բերած ու Ընտրական օրենսգրքում ավելացված սույն նորմը կգործի նաեւ նա-

խագահական ընտրություններին: Մասնավորապես, գործող օրենսդրության համաձայն, 5 տոկոսանոց արգելագիծն հաղթահարած ընտրական սուբյեկտը նախընտրական ծախսերի մարման համար պետական բյու-

ջեից ստանում է մեկ միլիոն լարի, ընդ որում՝ 300 հազարը տրվում է հեռուստատեսային գովազդի համար: Նախագահական ընտրություններին սույն նորմայի փոփոխումն արդեն մտցվել է ընտրական օրենսգրքում: Խորհրդարանում ներկայացվել է նաեւ նախընտրական քա-

ՆԱԽԱԳԱՅԻՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԲԱՑԵԼՈՒ ԵՆ ԸՆՏՐԱՐՇԱԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գրանցումից հետո, հինգ օրվա ընթացքում, նախագահության թեկնածուները պարտավոր են բացել ընտրարշավի հիմնադրամը եւ ողջ քարոզարշավը ֆինանսավորել այդ հիմնադրամից:

Ընդ որում, նախաձեռնող խմբերին քարոզարշավի հիմնադրամի բացման համար հատկացվում է 20 օրացուցային օր:

Միաժամանակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված բոլոր կուսակցությունները, ընտրությունների

արդյունքների հրապարակումից հետո, երեք շաբաթվա ընթացքում, պարտավոր են ներկայացնել ֆինանսական հռչակագիրը:

Ավելացնենք, որ ներկա դրությամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գրանցման են ներկայացվել քաղաքական տար-



բեր կուսակցությունների, քաղաքական դաշինքների եւ նախաձեռնող խմբերի կողմից առաջադրված նախագահության 23 թեկնածուներ: Նշենք, որ ԿԸՀ-ն՝ որպես նախագահության թեկնածու, չի գրանցում երկքաղաքացիություն ունեցող անձանց:

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒ ԸՆՏՐԱՇՏԱԲԸ ԳԼԽԱՎՈՐԵՑ ԴՎԿԻԹ ՍԱԿԱՆԵԼԻՉԵՆ

Խորհրդարանական մեծամասնության ղեկավար Դավիթ Սագանելիձեն գլխավորել է «Վրացական երազանքից» նախագա-

հության թեկնածու, կրթության նախարար Գիորգի Մարգվելաշվիլու ընտրական շտաբը: Այս մասին հաղորդել են կրթության

նախարարությունից: Գիորգի Մարգվելաշվիլին արդեն պաշտոնաթող է եղել Վրաստանի կրթության եւ գի-


ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻ ՊՐԱՅՄԵՐԻՋԻ ԱՌԱՋԱՏԱՐԸ ԴՎԿԻԹ ԲԱՔՐԱԶԵՆ Ե



Վրաստանի միասնական ազգային շարժումը նախագահի թեկնածուի ընտրության հերթական պայմերիզն անցկացրեց Սամեգրելոյում եւ Աջարիայում: Այդ երկու տարածաշրջաններում էլ կուսակցության կողմնա-

կիցների հավանությանն արժանացավ խորհրդարանական փոքրամասնության լիդեր Դավիթ Բաքրաձեի ներկայացրած ծրագիրը:

Այսպիսով, նախագահական ընտրությունների Միասնական ազգային շարժման թեկնածու առաջադրվելու քարոզարշավում Դավիթ Բաքրաձեն շարունակում է պահպանել առաջատարի դիրքերը:



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ԹԱԳԱՄԱՆԱԳԻՆ ԱՆՎԱՆՆՅՈՒՆ ԶՈՐՁ ԱՆԵՔՍԱՆԳՐ ԼՈՒԻ

Քեմբրիջի դուքսն ու դքսուհին հայտարարել են իրենց առաջնեկի անունը՝ Ջորջ Ալեքսանդր Լուի: Մեծ Բրիտանիայի երրորդ գահաժառանգը կոչվելու է Քեմբրիջի արքայազն Ջորջ:

Փոքրիկ թագաժառանգի անվան մասին հայտարարությունն արվել է Մեծ Բրիտանիայի եղիսաբեթ Երկրորդ թագուհու՝ ծոռանը Քեմսինգթոնի դղյակում այցելելուց մեկ ժամ հետո:

Ջորջ Ալեքսանդր Լուին 2011 թվականի ապրիլին Վեստմինստերյան արքայությունում ամուսնացած զույգի առաջնեկն է եւ Մեծ Բրիտանիայում թագավորող Վինձորյան զահատոհմի ավագ ծյուղի չորրորդ սերունդը: Նրա ծնունդով 87-ամյա Եղիսաբեթ Բ-ն երրորդ անգամ դարձել է նախատատ: Թագուհու թոռան առաջնեկը դարձել է երրորդ անձը Մեծ Բրիտանիայի գահաժառանգների ցանկում՝ իր պապ Ուելսի արքայազն Չարլզից եւ հորից՝ Քեմբրիջի դքսից հետո՝ չորրորդ տեղը մղելով իր հորեղբորը՝ արքայզն Չարլիին՝ Ուելսյանի կրտսեր եղբորը:

ԱՄՆ ՆԵՐԿԱՅՆԱՎԵՑ ՄԻԳԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԻՆԳ ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՆ զինված ուժերի շտաբների պետերի միացյալ համաձայնագրի ղեկավար, գեներալ Մարտին Դենվիլին ներկայացրել է Սիրիայում ԱՄՆ-ի հնարավոր ռազմական միջամտության ծախսերը, ռիսկերն ու օգուտները: Դենվիլին առաջարկել է ռազմական միջամտության հինգ հնարավոր տարբերակ, որ ներառում է սահմանափակ հեռակա հարվածներ հասցնելու պլանը եւ արգելում թռիչքներ կատարել Սիրիայի օդային տարածքով: «Սիրիայում ռազմական ուժի կիրառումը պատերազմական գործողության քայլ է, որ ԱՄՆ-ի վրա կնստի միլիարդավոր դոլարներ», - հավելել է նա:

ԻՐԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԿԱՅՆԱ ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ

Իրանի ընտրյալ նախագահ Հասան Ռոուխանիի պաշտոնակալությունը կկայանա օգոստոսի 4-ին:

Իրանի ԱԳ նախարարության հայտարարության մեջ նշվել է, որ Իրանի ընտրյալ նախագահի պաշտոնակալության արարողությունը մասնակցելու համար, իրավիճակ են բոլոր երկրներին, բացառությամբ՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի, ընդ որում՝ այլ երկրների ներկայացուցիչների այս արարողությանը հրավիրելու որոշումն ընդունվել է Իսլամական հեղափոխությունից (1979 թվականի) հետո առաջին անգամ:

Բարեմորդաչ Հասան Ռոուխանին Իրանում կայացած նախագահական ընտրություններում հաղթել է արդեն առաջին փուլում՝ հավաքելով քվեների 50,7 տոկոսը: Ընտրողների մասնակցությունը կազմել է ավելի քան 72 տոկոս:

ԻՍՐԱԵԼԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԱՂԵՑ՝ ՍԱՐԿԱՅԻՆ ՉՈՂԵՐՈՎ

Իսպանիայում տեղի ունեցած երկաթուղային աղետի զոհերի թիվը հուլիսի 25-ին աճել է մինչև 77: Եվս 143 մարդ վիրավորվել է:

Իշխանություններն աղետը համարում են դժբախտ պատահար, գնացքի մեքենավարը գերազանցել է առավելագույն թույլատրելի արագությունը: Հուլիսի 24-ին Մադրիդից Թագավորության հյուսիս - արեւմուտքում գտնվող Ֆերոլ մեկնող գնացքում եղել է 280 ուղեւոր: Ութ վագոնից եւ երկու լոկոմոտիվից բաղկացած շարժակազմը ռելսերից դուրս է եկել Գալիսիայի վարչական կենտրոն Սանտյագո դե Կոմպոստելայից 4 կիլոմետր հեռավորության վրա:

## Շարքից շարք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՊԱՏՐԻԱՐՔԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Հուլիսի 21-ին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդը Սուրբ Երրորդության տաճարում, կիրակնօրյա իր քարոզում, խոսեց ընտանիքի կայունության եւ երեխաների մասին՝ նշելով, որ ընտանիքները պետք է լինեն բազմազավակ:

«Ցանկանում եմ նշել, որ Բիծինա Իվանովիչի մեծ ուշադրություն է հատկացնում ընտանիքի կայունությանը, ուժին եւ Սուրբ Երրորդության տաճարի բակում

հատուկ տեղ է առանձնացրել երեխաների համար: Ցանկանում եմ օրհնության խոսքս ուղղել Բիծինա Իվանովիչի ունի: Աստված թող փոխհատուցի այն բարության համար, որը նա իրականացնում է ի բարօրություն երկրի», - հայտարարեց Իլիա Երկրորդը:

## ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱ

Վրաց Ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը՝ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի գլխավորությամբ, հուլիսի 22-ին մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Ռուսաստանի մկրտության 1025-ամյա հանդիսություններին: Տոնական միջոցառումներին մասնակցելու համար, որոնք անցկացվելու են Մոսկվայում,

Կիեւում եւ Մինսկում, Իլիա Երկրորդը այցելելու է բոլոր երեք քաղաքները: Այցի շրջանակներում, նախատեսվում են Վրաց Ուղղափառ եկեղեցու առաջնորդի հանդիպումները Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Բելառուսի նախագահների հետ:

### ՖԻՆԱՆՍՆԵՐ

## 60 ՄԻԼԻՈՆ ԴՈՒԼԱՐ` ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

Երկրի տնտեսական աճի եւ մրցունակության ապահովման նպատակով Համաշխարհային բանկը Վրաստանում հատկացնում է 60 միլիոն դոլար:

Այդ մասին համաձայնագիրը ստորագրել են Վրաստանի ֆինանսների նախարար Նորդար Խատրոյին եւ Համաշխարհային բանկի Հարավկովկասյան տարածաշրջանային տնօրեն Հենրի Կառալը:

Պա եռամսյա միջոցառման երկրորդ մասն է, որն էլ ուղղված է տնտեսական աճի եւ մրցակցության ապահովմանը: Ֆինանսական սույն ռեսուրսը Վրաստանի հետ գործընկերության հարցում Համաշխարհային բանկի կենտրոնական բաղադրիչն է:

Միջոցները ուղղվելու են կայունացմանը եւ միկրոֆինանսական միջավայրի կարգավորմանը, պետության ֆինանսների կառա-

վարման արդյունավետության բարձրացմանը, սոցիալական պաշտպանության ծրագրի արդյունավետության մեծացմանը:

Նշենք, որ ծրագրի առաջին մասը իրականացվել էր 2012 թվականի հունիսի 12-ին պայմանագրի ստորագրումից հետո, եւ այն ժամանակ Վրաստանին հատկացվել էր 60 միլիոն դոլար: Բոլոր վարկերը տրվում են 25 տարվա ժամկետով, ընդ որում առաջին հինգ տարիներն արտոնյալ են:

### ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ՎԵՑ ՏՈԿՈՍԱՆՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱԳԾՈՒՄԸ ԶԻ ՓՈԽՎԻ

Վրաստանի կառավարությունը չի փոխում ընթացիկ տարվա համար կանխագծված վեց տոկոսանոց տնտեսական աճի իր ծրագիրը, թեպետ կառավարության անդամներն արդեն իսկ ընդունում են, որ մինչեւ տարվա վերջը անհնար է հասնել տվյալ ցուցանիշին:

Ֆինանսների նախարարի հայտարարությամբ, նոր կառավարության նպատակն է, որ տնտեսական աճն իր արտացոլումը գտնի յուրաքանչյուր քաղաքացու բարօրության վրա: Նորար Խատրոյու կանխագծումներով, 2013 թվականի երկրորդ կեսին տնտեսական աճի տեմպը կգերազանցի վեց տոկոսին, իսկ տարվա վերջին, միջին ցուցանիշը հաշվելիս, կհստակեցվի 2013 թվականի ընթացքում տնտեսա-

կան իրատեսական աճի մեծությունը:

Նշենք, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում գրանցվել է 2,4 տոկոսի աճ, մայիսին ՀՆԱ-ի իրական աճը կազմել է գրո տոկոս:

Նշենք նաեւ, որ վեց տոկոսանոց աճի անհրատեսության մասին արդեն հայտարարել է Վրաստանի էկոնոմիկայի նախարարը: Գիտորգի Վլիսկաշվիլու խոսքերով, հնարավոր է երկրի տնտեսական աճը կազմի 4,5 տոկոս: EBRD-ն Վրաստանի տնտեսական աճի ցուցանիշը 5 տոկոսից նվազեցրել է մինչեւ երեք տոկոս: Վարկանիշային «Ստանդարտ Էնդ Պլուս» գործակալությունը կանխագծում է 3,5 տոկոսանոց աճ: Ըստ Համաշխարհային բանկի, աճը կկազմի 4 տոկոս: Նման կանխագծում է կատարել նաեւ Արժույթի միջազգային հիմնադրամը:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԵՐԶԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը եւ պարենամթերքի ու գյուղատնտեսության միջազգային կազմակերպությունը (FAO) ստորագրել են համաձայնագիր, որի նպատակը Վրաստանում գյուղատնտեսական սեկտորի զարգացումն է:

Վա Փիփիան եւ Վրաստանում FAO-ի ներկայացուցիչ Տոնի Ալոնզոն: Վրաստանում ծրագրային սույն փաստաթուղթը (CPF) կգործի 2013-2015 թվականներին:

Պայմանավորվածության համաձայն, FAO-ն ստանձնում է Վրաստանի կառավարությանը երեք հիմնական խնդիրների կարգավորման հարցում աջակցություն ցուցաբերելու պարտավորություն: Դրանցում արտացոլված են 2012-2013 թվականներին Վրաստանի գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը, 2013-2015 թվականներին գործունեության ռազմավարա-

կան ծրագիրը եւ հազարամյակի զարգացման ծրագիրը:

Համագործակցությունը հիմնականում իրականացվելու է վեց առաջնահերթային ուղղություններով՝ օգնություն քաղաքականության մշակման հարցում, հետախնամարտային միջավայրում բնակչության եկամուտների աղբյուրների ավելացում եւ պարենային անվտանգություն, կենդանիների առողջություն, բույսերի պաշտպանություն, պարենային անվտանգություն եւ սպառողների պաշտպանություն, անտառային ու ձկնատնտեսություններ:

### ԲԱՐԵՓՈՒՆՈՒՆԵՐ

## ԱՌԿԱ ԵՆ ՎԻԹՆԱՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանն ունի բարեփոխումների իրականացման վիթխարի հնարավորություններ, եթե կառավարությունը կարողանա շարունակել պետության կառուցման գործընթացը:


Այս մասին ասվում է Արժույթի միջազգային հիմնադրամի եզրակացության կառուցման մեջ, որը վերաբերում է Վրաստանում անցկացված մոնիտորինգի արդյունքներին: Հայտարարության մեջ նշվում է, որ Վրաստանն ունի բարեփոխումների եւ քաղաքացիների բարեկեցության ապահովման մեծ հնարավորություններ, եթե կառավարությունը, ինչպես պլանավորված է, կարողանա օգտագործել երկրի նվաճումները եւ շարունակել պետության կառուցումը, այսինքն՝ ուժեղացնել դատական համակարգի անկախությունը, ապահովել օրենքի գերակայությունը, հարկային օրենսդրության մեծ թափանցիկությունը, մարդու հիմնական իրավունքների պաշտպանությունը, նաեւ ապահովել պայքարը ջբավորության ու անհավասարության դեմ եւ համաձայնության հասնել ամենախոշոր գործընկերների հետ:

«Ասոցիացման, նաեւ Եվրամիության հետ խոր ու համընդգրկուն ազատ առևտրի մասին համաձայնագրի ձեւակերպումը, անվիճելիորեն կունենա մեծ պոտենցիալ, սակայն այդ ճանապարհին առկա են մեծ թվով մարտահրավերներ», - նշված է հայտարարության մեջ:

Մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ հիմնադրամի հաշվետվության մեջ նշված է նաեւ, որ եռամսյա արագ աճից հետո դանդաղել է Վրաստանի էկոնոմիկայի աճը: ԱՄՆ-ը Վրաստանի տնտեսական աճի դանդաղումը կապում է երկրում կատարված քաղաքական փոփոխությունների, մասնավորապես՝ քաղաքական իշխանության փոխանցման հետ: Նշվում է, որ 2010-2 0 1 2 թվականի առաջին եռամսյակի ժամկետում միջին աճը կազմել է 7 տոկոս, իսկ 2012 թվականի երրորդ եռամսյակում այն նվազել է:



ԱՄՆ-ը գտնում է, որ ընտրությունների նախօրեին սկսված տնտեսական աճի տեմպի նվազումը անցյալ տարի արտացոլում էր տնտեսական քաղաքականության իրականացման գործում քաղաքական անորոշակությունն ու արգելակումը:



### ԿԸՆԳԱՅՆՎԵՆ ՍԱԿՐԵԲՈՒՈՅԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշնանային նստաշրջանում Վրաստանի խորհրդարանը փոփոխություններ կկատարի Թբիլիսիի սակրեբուլոյի մասին օրենքում եւ քաղաքապետարանի հետ հարաբերություններում կրեդիտային սակրեբուլոյի իրավասությունները: Այդ մասին հայտարարեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» խմբակցության նախագահ Ջազա Գաբունիան: Նրա խոսքերով, սակրեբուլոյի կվերադարձվեն նրա գործառույթները, այդ թվում՝ վերահսկողությունը քաղաքապետարանի եւ քաղաքապետի նկատմամբ: Գաբունիայի խոսքերով, փոփոխությունների ընդունումից հետո, սակրեբուլոն կկարողանա պաշտոնաթող անել նաեւ Թբիլիսիի քաղաքապետին:

### ԳԱՍՐԵՅՎՈՒՄ Ե ՇԻՓՈՒԹՔՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՍԱՐՈՒՄԸ

Վրաստանի խորհրդարանը քննարկում է նախագիծ, որով հիփոթեքային անշարժ գույքի վերաբերյալ որոշումների կատարումը դադարեցվում է մինչեւ գալիք տարվա փետրվարի 1-ը:

Ուղղումները կատարվում են կատարողական վարույթի մասին օրենքում եւ քաղաքացիական օրենսգրքում:

Մինչեւ 2014 թվականի փետրվարի 1-ը պետք է փոխվի օրենսդրական բազան կատարման ուղղությամբ, ինչպես նաեւ ստեղծվի այն մարդկանց տվյալների բազան, որոնց սպառնում է արտաքսում բնակարանների:

Օրինագծի հեղինակ Գեդեան Փոփխածեն հույս է հայտնել, որ բանկերը կորստեր են բարի կամք եւ կվերանայեն վարկային համաձայնագրերը: Բոլորը պետք է գիտենան, որ համաձայնագրի նպատակը քաղաքացիների անշարժ գույքին տիրապելը չէ: Նա ընդգծել է, որ բանկը անշարժ գույքի գծակալություն չէ, որպեսզի վաճառի այդ սեփականությունը, նրանք մյուս կողմին պետք է առաջարկեն պարտավորությունների կատարման այլ ճանապարհ:

### ՓԱՍՏԱՍԿԱՆՆԵՐԻ ԿՐԿԱԿԱՆ ԳՐԱՆՈՒՄ

Օգոստոսի մեկին մեկնարկում է փախստականների կրկնական գրանցումը: Ինչպես հայտարարեցին փախստականների եւ տեղաբաշխման գործերով նախարարությունից, գերատեսչությունը հստակեցնելու է փախստականների ստույգ թվաքանակը: Ուստի, ինչպես հայտարարեց նախարար Դավիթ Դարախվելիձեն, կրկնական գրանցումը կսկսվի օգոստոսի մեկին եւ կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 27-ը:

Նախարարի խոսքերով, ստույգ թվաքանակի պարզումը կառավարությանը թույլ կտա մշակել փախստականների հիմնախնդիրների կարգավորման նոր քաղաքականությունը:

### ՎԱՌԵԼՆՅՈՒԹԸ ԹՍԵՎԱՅԱԿ

Բենգիլը կրկին թանկացավ: Ընկերությունները շարունակում են պահպանել մանրածախ ցանցում գների ավելացման միտումը: Հուլիսի 24-ից «Լուկոյլը» բենգիլը թանկացրել է 2-5 թեթրիով:

Ընկերության տեղեկատվությամբ, ներկա դրությամբ, «Եվրո սուպերի» գինը 2,14 փոխարեն արդեն կազմում է 2,18 լարի: «Պրեմիում ավանգարդը» թանկացել է 2 թեթրիով եւ կազմում է 2,12 լարի: Հինգ թեթրիով թանկացել են «Եվրոսթեյլարը» (2,00 լարի) եւ «Եվրո դիգելը» (2,15 լարի):

Ինչ վերաբերում է նավթամթերքների մյուս ընկերություններին, ապա «Վիսուլիում» պարզաբանեցին, որ իրենց ցանցում կարգավորված գներն ուժի մեջ են մտել հուլիսի 20-ին, իսկ «Գալֆի» ցանցում գների կարգավորում չի իրականացվել մայիսի 17-ից:

ԳՈՐԾԱՂԻՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՅԻՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հունիսի 9-ին Բիծինա Իվանիշվիլին ստորագրեց միջոցառումների ցանկը բովանդակող համապատասխան կարգադրությունը, որի վերջնական նպատակը OGP-ի ապահովումն է: Մասնավորապես, Վրաստանի արդարադատության նախարարությունը, կոռուպցիայի դեմ պայքարի (արդարադատության նախարարության վերլուծական դեպարտամենտ) միջոցառման նպատակով կոորդինացիոն խորհրդի քարտուղարության համակարգմամբ, կառավարության համապատասխան հաստատությունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ եւ ոչ կառավարական ու միջազգային կազմակերպությունների հանձնարարականների հաշվառմամբ, մինչեւ 2013 թվա-

կանի օգոստոսի մեկը պետք է մշակի եւ Վրաստանի կառավարությանը ներկայացնի հանրային տեղեկատվության ցանկի նախագիծը, դրա փոխանցման համար անհրաժեշտ միջոցառումների մասին դիտողությունները, «Բաց կառավարման գործընկերության» գործողության նորացված ծրագիրը, հանրային տեղեկատվության մատչելիության ապահովման համար օրենսդրության բարելավման առաջարկությունները եւ այլն:

Կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառման նպատակով կոորդինացիոն խորհուրդը մինչեւ սեպտեմբերի մեկը պետք է ներկայացնի այն պաշտոնատար ամանց ընդլայնված ցուցակը, ովքեր պարտադիր կարգով հեռակազմի են ներկայացնելու: Կարգադրության մեջ ներառված են նաեւ քաղաքացիական ապահովման այլ, կոնկրետ միջոցառում-



Մույն կարգադրության կատարման մոնիտորինգը իրականացնելու է երկրի կառավարությունը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՆՈՒՐ ԽՍՐՈՒԻ. «ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԼԱՎԱՏԵՍՈՐԵՆ ԵՄ ԳՆԱՋԱՏՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հովման ուղղությամբ: Դրանք ուղղված էին մեր եւ ձեր կողմից տրված հարկերից պետության կողմից իրականացվող ծախսերի արդյունավետության բարձրացմանը:

Երկրորդ նշանակալից քայլն այն էր, որ մենք բյուջեից վերացրինք այն ծախսերը, որոնց արդյունավետությունը, հաճախ լուրջ կասկածներ էին առաջացնում: Հենց այդ գումարների հաշվին մենք սկսեցինք սոցիալական բավականին լուրջ նախագծերի իրականացումը: Այդ նախագծերից հատկապես են կենսաթոշակները, բնակչության համընդհանուր ապահովագրությունը, սոցիալական նպաստների ավելացումը, փախստականների կենսապայմանների բարելավումը: Միաժամանակ նշեմ, որ բավականին լուրջ հիմնախնդիրներ էին առաջացել գործարարության ոլորտում: Դրանց թվում ամենանշանակալիցը ոլորտում արդարության վերականգնումն էր, եւ ֆինանսների նախարարությունը այդ ուղղությամբ նշանակալից քայլեր է կատարում: Դյուրացվել է առկա վեճերի կարգավորման գործընթացը, բարձրացվեց այդ գործընթացի թափանցիկության մակարդակը, ինչը գործարարներին թույլ է տալիս անմիջականորեն ֆինանսների նախարարությունում կարգավորել հիմնախնդիրները:

Նշանակալից են նաեւ մեր նախաձեռնությամբ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնք զգալիորեն բարելավեցին մեր գործարարների վիճակը: Գյուղատնտեսության մեջ գործող ձեռներեցների համար ներդրվել է հարկման մոր կարգ, սոցիալապես անպաշտպան բնակչության համար եկամտահարկից ազատված նվազագույնը ամսական հասցվել է 150 լարի: Արտոնություններ են սահմանվել նաեւ նրանց համար, ում տարեկան եկամուտը 6000 լարիից չի անցնում: Լրացուցիչ արտոնություններ են սահմանվել նաեւ սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց համար: Երկրի, նախկին 3000-ի փոխարեն, հարկադրումից ազատվում են 6000 լարի եկամտի պայմաններում:

Ինչպես տեսնում եք որոշակի քայլեր կատարվել են, թեպետ չի կարելի ասել, որ դրանք կարճ ժամանակում կարող են արմատապես փոխել գործարարության կամ մարդկային սոցիալական վիճակը: Սակայն այն փաստը, որ արդեն սեպտեմբերի մեկից Վրաստանում կենսաթոշակը կհասցվի կենսական նվազագույնին, որ սոցիալական նպաստները կկրկնապատկվեն, որ գործարարությունը լրիվ ազատություն է ստանում, եւ մասնավոր հատվածի հետ հարաբերությունները իրականացվելու են միայն ու միայն հարկային օրենսդրությամբ, Վրաստանում գործարարության հզորացման նախադրյալ է:

**- Վերջին ժամանակներին տարբեր, այդ թվում՝ նաեւ միջազգային մակարդակներով հաճախ ասվել է, որ գործարարության եւ կառավարության միջեւ հաղորդակցման աստիճանը նվազել է: Համաձայն եք նման գնահատականի հետ:**

- Բնականաբար չեմ կարող ասել, որ այդ ամենը սկսվել է մեր իշխանության գալուստի միասին, թեպետ, օրինակ ֆինանսների նախարարի օրինակով կարող եմ ասել, որ անցած 19 տարիների ընթացքում այդ գերատեսչության ղեկավարն այնքան հանդիպում գործարարների եւ ներդրողների հետ

չի ունեցել, որքան ես վերջին մի քանի ամսում: Բավական է նշել, որ մոտ հինգ անգամ հանդիպում է անցկացվել բիզնես ասոցիացիաների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ ներդրողների ու հեռանկարային ներդրողների հետ: Հաճախ լինում եմ արտադրություններում, տեղերում ծանոթանում ծագող հիմնախնդիրներին, հնարավորինս օգնում դրանց կարգավորման հարցում: Այնպես որ, ինչպես տեսնում եք, հաղորդակցության աստիճանի նվազեցում չկա:

**- Դուք ասացիք, որ փոփոխություններ են կատարվել հարկային օրենսգրքում, թեպետ դրանում տեղ են գտել հողվածներ, որոնք երկակի մեկնաբանություն ունեն, ինչը հանգեցնում է գործարարների դժգոհությանը: Ի՞նչ եք ծրագրում սույն հիմնախնդրի կարգավորման համար:**

- Այս տարի արդեն հարկային օրենսգրքում կատարվել են փոփոխություններ ուղղված այդ հիմնախնդրի լուծմանը, թեպետ, ցավոք, նման հողվածները շատ են եւ, դրանց կարգավորման համար ժամանակ է պահանջվում: Բավական է նշել, որ օրենսգրքում կան հողվածներ, որոնք բովանդակությունն իսկ լուրջ վիճարկության առարկա է անմիջականորեն ֆինանսների նախարարությունում: Ներկա դրությամբ, մեր գլխավոր խնդիրն է մասն թերացումները կարգավորել բիզնեսի հետ համատեղ աշխատանքով, սակայն կրկնում եմ, դա բավականին աշխատատար գործընթաց է, եւ դրա համար բավականին ժամանակ է պահանջվում: Թեպետ հարկ են համարում նշել, որ հարկային օրենսգրքի կատարելագործումը մշտական գործընթաց է, չնայած դա չի նշանակում, որ կատարվելիք փոփոխությունները չպետք է հաշվարկվեն ու հիմնավորվեն, եւ դրանք չպետք է կիրարկվեն անմիջապես ընդունելու պես, այլ դրա համար պետք է սահմանվի որոշակի ժամանակ, որպեսզի գործարար աշխարհին հասցնի այն ընկալել եւ հարմարվել դրան:

Առաջին փոփոխությունները, որոնք կատարվեցին օրենսգրքում, վերաբերում էին ֆինանսների նախարարի իրավասությունների սահմանափակմանը: Նշանակալից էին նաեւ հարկադրման գործընթացի վերահսկողության իրավունքները խորհրդարանին վերադարձնելու մասին փոփոխությունները:

**- Ձեր ելույթներում Դուք բազմիցս հայտարարել եք, որ երկրորդ եռամսյակում տնտեսական տվյալները կբարելավվեն: Որո՞նք են նման լավատեսության հիմքերը:**

- Ցավոք, առաջին եռամսյակը, իրոք, այնքան էլ հուսադրող չէր, թեպետ դա ողբերգություն էլ չի կարելի անվանել: Սովորաբար, որպես օրենք, ընտրություններից հետո, երբ երկրի իշխանությունը արմատապես փոխվում է, նման երեւույթներ պատա-

հում են: Օրինակ, 2003 թվականին Վրաստանում մոտավորապես 12 տոկոսանոց աճ էր գրանցված, իսկ 2004 թվականին այն կազմեց ընդամենը 4,5 տոկոս: Աճի տեմպը գրեթե եռակի նվազեց:

Բնականաբար, գործարարները սպասում են մեր իրապարակած ծրագրերի հաստատմանը: Օրինակ, վարչապետը հոկտեմբերի 5-ին գործարարներին հայտարարեց, որ նրանք ազատ են, նրանց չեն պարտադիր կառուցել որեւէ բան, իրականացնել առանձին օբյեկտների վերանորոգում, ֆինանսավորել առանձին կատարողների հյուրախաղերը եւ այլն: Բնականաբար, մասնավոր հատվածը լավ հիշում է ներկայումս սպասում է մեր կողմից ընդունված ծրագրերի հաստատմանը:

Ըստ երեւույթին, անցած ժամանակը բավարար չէր նախորդ կառավարության կողմից գործարարների շրջանում ներդրած գուշությունն ու վախը արմատախիլ անելու համար: Իրոք, նախորդ կառավարությունը կիրառելի նման քանում էր գործարարությանը, բյուջեն հագեցված էր նախնական հարկազանման գումարներով շուրջ մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն լարիով: Դրան ավելացրեք այն ոչ նպատակային ծախսերը, որոնք պարտադրվում էին գործարարներին, անկախ նրանից, թե այս կամ այն իրականացվելիք նախագծերը որքանով էին ձեռնառու գործիչ: Բնականաբար, նման պայմաններում գործարարությունը հնարավորինս անում է «Ազգայինների» բռնաճնշումից վերջնականապես ազատվելու համար, եւ հույս ունեն, որ ընթացիկ տարվա երկրորդ կեսին դա իրեն զգացնել կտա, ու գործերի ընթացքը կբարելավվի:

Սակայն ցանկանում եմ ընդգծել հետեւյալը. անկախ նրանից, թե տնտեսական աճի ինչ տեմպեր կվավերացվեն Վրաստանում 2013 թվականին, բոլոր ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ սոցիալականները եւ մյուսները, առանց լրացուցիչ հատկացումների, բյուջեից կառանձնացվեն:

**- Standard & Poor's-ի եզրակացությունում նշված էր, որ բյուջետային պակասորդը ծրագրվածից շատ ավելի բարձր է լինելու: Ասացե՛ք խնդրե՛մ, որքանով է իրատեսական նման վտանգը:**

- Ներկա դրությամբ գտնում եմ, որ առավելագույնը կկազմի 2,9 տոկոս: Թեպետ, ընդգծում եմ, որ բյուջետային պակասորդը բոլոր դեպքերում ողբերգական չի լինի: Մենք այն ծրագրել ենք երեք տոկոսի սահմաններում, իսկ այսօր պետական բյուջեի դեպոզիտի վրա ունենք շուրջ 400 միլիոն լարի, ինչը, բնականաբար, կօգտագործի այն ծախսերի մարման համար, որոնք իրականացվելու են անմիջականորեն բյուջեից: Ավելացնեմ նաեւ, որ բյուջետային եկամուտները,

հարկերը փոխանցվում են այն էլ ավելի քաղաքակիրթ եւ հումանիտար վարչարարության պայմաններում, քան դա իրականացվում էր մինչ այդ: Չեմ կարծում, որ երկրում կունենանք բյուջետային աղետալի պակասորդ:

**- Ձեր կարծիքով, առաջիկա նախագահական ընտրությունների քաղաքական ֆունկցիոնալ ազդեցություն կունենա տնտեսական ծրագրված աճի գործընթացի վրա:**

- Քաղաքական ֆունկցիոնալ, բնականաբար, միշտ էլ ազդեցություն է գործել ոչ միայն տնտեսական, այլեւ մյուս, կենսական նշանակալից ոլորտների գաղափարական գործընթացի վրա: Առավել եւս, որ երկիրը գտնվում է ընտրությունների անցկացման ժամանակային ուղեծրի վրա՝ 2012 թվականին անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, 2013-ին անցկացվելու են նախագահական, 2014-ին՝ տեղական ինքնակառավարման ընտրություններ: Որոշակի ընդմիջում է նախատեսվում 2015-ին, թեպետ դրա հաջորդ տարում 2016-ին, կրկին խորհրդարանական ընտրություններ են անցկացվելու: Այնպես որ, ապրում ենք անընդմեջ ընտրությունների ուղեծրում գտնվող երկրում: Թեպետ, չեմ կարծում, որ Վրաստանում որեւէ մեկը կասկածներ ունենա 2013 թվականի նախագահական ընտրությունների արդյունքների հարցում:

Հնարավոր է՝ այն առաջացի քաղաքական ճգնաժամ, որ նախագահը լինի մի թիմից, իսկ խորհրդարանն ու կառավարությունը՝ մյուսից: Թեպետ, սակայն պարագայում էլ բարդություններ չեն կարող լինել, առավել եւս, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ընթացքի մեջ է նախագահի իրավասությունների լուրջ վերանայման եւ սահմանափակման գործընթացը: Այս կապակցությամբ, սահմանադրությունում փոփոխություններ արդեն ընդունվել են: Այնպես որ, չեմ կարծում, նախագահական ընտրություններին նախորդող կամ ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածում քաղաքական առումով լուրջ ցնցումներ լինեն: Բարեբախտաբար, նման զգացում ունեն նաեւ գործարարները:

**- Ի՞նչ եք կարծում, քաղաքականությունից հեռանալու մասին վարչապետի հայտարարությունը բացասական ազդեցություն չի՞ գործի արդյոք Վրաստանում ներդրումների կլիմայի վրա:**

- Անկեղծ ասած, չեմ կարող հասկանալ, թե մարդկանց ինչու է այդքան զարմացրել վարչապետի հայտարարությունը: Ժամանակին վարչապետը հայտարարել էր, որ մտադիր չէ երկար ժամանակով լինել քաղաքականությունում եւ ամենանշանակալիք կառավարության վրա հասարակական վերահսկողության խստացման ապահովում էր երաշխավորում: Միաժամանակ վարչապետը նշել էր, որ նա քաղաքականությունից ու կառավարությունից կհեռանա միայն այն դեպքում, եթե նրա թիմը շարունակի իր կողմից սկսած գործը, միայն՝ հասարակության խիստ վերահսկողության ներքո: Այնպես որ, չեմ կարծում սույն հանգամանքը ինչ-ինչ խոչընդոտներ հարուցի գործարարության զարգացման համար: Պետք չէ մոռանալ, որ ներդրողները սովորական մարդիկ են, թեպետ նրանց տեղաշարժելն այնքան էլ դյուրին չէ, դա հավասարազոր է վիթխարի գնացքը տեղաշարժելուն: